լազգիք արգելին զնա, և ոչ ետուն նմա թոյլ արկանել 'ի նա ձեռս։ Խաչատուր գրեաց գիր աղաչանաց 'ի Դուռն, և յայտ արար թէ՝ եկեղեցին Համբարձման 'ի վաղ ժամանակաց անտի է՝ 'ի ձեռս Հայոց, ուր կատարեն զպաշտամունս իւրեանց, այժմ քայքայեալ աւերի և այլազգիք բարձեալ տանեն զքարինս նորին, և արգելուն զնորոգութիւնն։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ դատաւորն Երուսաղէմի, վերահասու լինել գործոյն, և իմանալ թէ՝ ունի՞ն Հայք գիր ինչ 'ի դատարանէ վասն այնր, և հակառակ օրինաց չրռնանալ ուժեք 'ի վերայ նոցա, և չանցանել քան զչափ նախնի դրից շինուածոյն, և զհակառակողսն յականէ յանուանէ ծանուցանել 'ի Դուռն, ՉՂԷ (1556)։ Սակայն այս գործ շինութեան մնաց մինչեւ 'ի դարձ Անդրիաս Պատրիարքի 'ի Թադաւորեալ քաղաքէ, զկնի չորից ամաց, որպէս տեսցի արդ։

Իսկ Անդրիաս Պատրիարք դարձ արար 'ի Կոստանդինուպօլսոյ յԵրուսաղէմ յաթոռ իւր, և յաւուր միում յանդիման եղեւ դատաւորին, և յայտ արար նմա զամենայն հանդամանս աւերածոց եկեղեցւոյն Համբարձման, զի ճեղքեալ էր զմրեթն 'ի վերայ ոտնատեղւոյն Քրիստոսի, պատուհանքն քակեալ, և այլ շինուածք ներքոյ և արտաքոյ եղծեալ և ապականեալ, սալայատակք դաւթին խանդարեալ, շրջապատ որմն անկեալ և խոնարհեալ։ Եւ 'ի ժամանակէ անտի՝ յորում պարսպէին զքաղաքն Երուսաղէմ. լեալ էր մակաղատեղի խաչանց և դոմ ոչխարաց, մատնեալ յաղտեղութիւն տեղին սուրբ։ Եւ ապա խնդրեաց ելանել 'ի քննութիւն, և տալ հրաման շինութեան և նորոգութեան։ Իսկ դատաւորն առաքեաց զոմանս յերեւելեացն այլազգեաց, ընդ որս էր և ճարտարապետ քաղաքին, և 'ի քննութիւն առեալ զամենայն հանդամանս տեղւոյն, գտին, որպէս պատմեալ էր Անդրիաս։ Եւ չափեաց ճարտարապետն զորմն հիւսիսային՝ յարեւելից յարեւմուտս, և եդիտ զայն քակեալ 50 կանգուն յերկայն, և 10 'ի բարձր, հաւասար հին մնացորդաց որմոյն։ Որմն արեւելից, չափեալ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, 70 կանգուն յերկայն, և 10 'ի բարձր, հարաւային, յարեւելից յարեւմուտս, յառաջին անկիւնէ մինչ 'ի դուռն արտաքին՝ 30 յերկայն, եւ 10 'ի բարձր